ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 2315-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Միասնական կայք 2023.12.25-2024.01.07 Պաշտոնական հրապարակման օրը 28.12.2023	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	28.12.2023
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	28.12.2023
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	29.02.2024	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Ծանուցում

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 2 ամիս հետո:

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2023 թվականի N 2315-Ն

ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել համատեղ արտադրության կարգավիճակ տրամադրելու և դրա գործողությունը դադարեցնելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 2 ամիս հետո:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

Երևան

28.12.2023

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 28-ի N 2315-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են համատեղ արտադրության կարգավիճակ տրամադրելու և դրա գործողությունը դադարեցնելու ընթացակարգերը:

2. Կինեմատոգրաֆիայի ոլորտում միջազգային համագործակցությունն իրականացվում է միջազգային պայմանագրերի, այդ թվում՝ «Կինեմատոգրաֆիական համատեղ արտադրության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի դրույթների, ինչպես նաև «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի 25-րդ և 26-րդ հոդվածներով սահմանված կարգավորումների համաձայն:

2. ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

3. Համատեղ արտադրության կարգավիճակը տրամադրում և այն դադարեցնում է մշակութային հիմնադրամը (այսուհետ՝ ազգային մարմին):

4. Համատեղ արտադրության նախնական կարգավիճակ ստանալու համար, ֆիլմի նկարահանումն իրականացնելուց առնվազն 1 ամիս առաջ ֆիլմարտադրողն ազգային մարմին է ներկայացնում համապատասխան հայտ (Ձև N 1)՝ ներառյալ անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը, համաձայն «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-7-րդ կետերի պահանջների:

5. Համատեղ արտադրության վերջնական կարգավիճակ ստանալու համար ֆիլմի արտադրության ավարտից հետո՝ 2 ամսվա ընթացքում, ֆիլմարտադրողն ազգային մարմին է ներկայացնում համապատասխան հայտ (Ձև N 1)՝ ներառյալ անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը, համաձայն «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի 1-7-րդ կետերի պահանջների, ինչպես նաև ավարտուն ֆիլմը (պաշտպանիչ շերտով՝ թվային կրիչով):

6. Օտարալեզու փաստաթղթերի հետ ներկայացվում է նաև դրանց հայերեն՝ որակավորված թարգմանչի կողմից կատարված թարգմանությունը:

7. Ֆիլմարտադրողի ներկայացրած փաստաթղթային փաթեթն ուսումնասիրելուց հետո, ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում, ազգային մարմինը ֆիլմարտադրողին տրամադրում է համատեղ արտադրության նախնական և (կամ) վերջնական կարգավիճակը հաստատող հավաստագիր (Ձև N 2):

8. Համատեղ արտադրության նախնական և (կամ) վերջնական կարգավիճակի տրամադրման հայտում թերությունների հայտնաբերման դեպքում ազգային մարմինը 3 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է (Ձև N 3) ուղարկում հայտատուին՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում թերությունները շտկելու և (կամ) բացակայող փաստաթղթերը ներկայացնելու պահանջով:

9. Համատեղ արտադրության նախնական և (կամ) վերջնական կարգավիճակի տրամադրման հայտը մերժվում է «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված պահանջների խախտման դեպքում՝ հայտը ստանալու օրվանից հետո, ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում (Ձև N 4):

10. Մերժված հայտերը՝ լրամշակված փաստաթղթային փաթեթով, կրկին կարող են ներկայացվել ազգային մարմին մերժման օրվանից ոչ ուշ, քան 20 աշխատանքային օրվա ընթացքում:

11. Միևնույն հայտը ազգային մարմին կարող է ներկայացվել առավելագույնը 2 անգամ:

12. Համատեղ արտադրության կարգավիճակը դադարեցվում է «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի 1-2-րդ կետերով սահմանված դեպքերում, որի վերաբերյալ ազգային մարմինը 5 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է հայտատուին (Ձև N 5):

Ձև N 1

«Համատեղ արտադրության կարգավիճակ տրամադրելու
և դրա գործողությունը դադարեցնելու կարգը հաստատելու մասին»
ՀՀ կառավարության «-» «---» 2023 թ. N -- որոշման

ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄ

ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

«Ազգային մարմին»
հիմնադրամի տնօրենին

«_____» ընկերությունը սկսում է «_____» խաղարկային (վավերագրական, անիմացիոն) լիամետրաժ (կարճամետրաժ) ֆիլմի համատեղ արտադրությունը «_____» (երկիր) և «_____» (երկիր) ընկերությունների հետ.

«_____» ֆիլմը _____

հակիրճ բովանդակություն

_____

Նախագծում կողմերի ֆինանսական մասնակցությունը բաշխված է հետևյալ կերպ.

Ընկերություն	Հայաստան	_____%
Ընկերություն	երկիր	_____%
Ընկերություն	երկիր	_____%

Խնդրում ենք դիտարկել նշված ֆիլմին համատեղ արտադրության _____ կարգավիճակ տրամադրելու հնարավորությունը՝ համաձայն

նախնական, վերջնական _____

նշել ՀՀ համապատասխան միջազգային իրավական

_____

ակտի (երի) անվանումը

_____ պահանջվող փաստաթղթերը կցվում են:

Իրավական ակտի (երի) անվանումը

«_____» տնօրեն՝ _____ _____ «-» «------» 202 թ.

ստորագրություն ԿՏ ԱԱՀ

Ձև N 2

«Համատեղ արտադրության կարգավիճակ տրամադրելու
և դրա գործողությունը դադարեցնելու կարգը հաստատելու մասին»
ՀՀ կառավարության «-» «---» 2023 թ. N -- որոշման

ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Տնտեսավարող սուբյեկտ _____

Անվանումը և իրավաբանական հասցեն

Ֆիլմարտադրող _____

Ֆիլմարտադրողի ԱԱՀ, քաղաքացիություն

Ֆիլմի անվանումը և տեսակը _____

Հեղինակներ _____

Ռեժիսոր, սցենարի հեղինակ, կոմպոզիտոր

«Ազգային մարմին» հիմնադրամը, համաձայն _____

նշել ՀՀ համապատասխան միջազգային իրավական ակտի (երի) անվանումը

Համատեղ արտադրության կարգավիճակ է տրամադրում Հայաստանի, (երկիր, երկիր) երկրների համատեղ արտադրության «_____» ֆիլմին (ռեժ.՝)

Ֆիլմի հաստատված բյուջեն կազմում է _____ ՀՀ դրամ (նշել բյուջեի թիվը նաև արտարժույթով $, €), հետևյալ համամասնությամբ.

Տնտեսավարող սուբյեկտի անվանումը	Երկրները	Մասնաբաժինը
	Հայաստան	% և գումար (ՀՀ դրամ, $, €)

«Ազգային մարմին» հիմնադրամի տնօրեն՝ _____ _____«-» «------» 202 թ.

Ստորագրություն ԿՏ ԱԱՀ

Ձև N 3

«Համատեղ արտադրության կարգավիճակ տրամադրելու
և դրա գործողությունը դադարեցնելու կարգը հաստատելու մասին»
ՀՀ կառավարության «-» «---» 2023 թ. N -- որոշման

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Համատեղ արտադրության կարգավիճակ տրամադրելու համար հայտադիմումի թերությունները շտկելու և (կամ) բացակայող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ

ՀԱՅՏԱՏՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄ՝

_____

ՀԱՅՏԱՏՈՒԻ ՀԱՍՑԵ՝

_____

Տեղեկացնում ենք, որ ազգային մարմին ներկայացված «_____» (ֆիլմի անվանումը) ֆիլմի համար համատեղ արտադրության կարգավիճակ տրամադրելու հայտում և (կամ) կից ներկայացված փաստաթղթերում առկա են հետևյալ թերությունները, և (կամ) բացակայում են հետևյալ փաստաթղթերը.

1. _____
2. _____
3. _____

Համաձայն կարգի 8-րդ կետի՝ անհրաժեշտ է 10 աշխատանքային օրվա ընթացքում «*» շտկել առկա թերությունները և (կամ) համալրել բացակայող փաստաթղթերը և անձամբ կամ էլեկտրոնային եղանակով ներկայացնել ազգային մարմին:

«Ազգային մարմին» հիմնադրամի տնօրեն՝ _____ _____«-» «------» 202 թ.

Ստորագրություն ԿՏ ԱԱՀ

_____

«*» Հայտատուն համարվում է ծանուցված՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ձև N 4

«Համատեղ արտադրության կարգավիճակ տրամադրելու
և դրա գործողությունը դադարեցնելու կարգը հաստատելու մասին»
ՀՀ կառավարության «-» «---» 2023 թ. N -- որոշման

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Համատեղ արտադրության կարգավիճակ տրամադրելու հայտը մերժելու վերաբերյալ

ՀԱՅՏԱՏՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄ՝

_____

ՀԱՅՏԱՏՈՒԻ ՀԱՍՑԵ՝

_____

Տեղեկացնում ենք, որ ազգային մարմին ներկայացված «_____» ֆիլմի համար համատեղ արտադրության կարգավիճակ տրամադրելու հայտը համաձայն կարգի 9-րդ կետի մերժվում է՝ «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի _____ կետի (երի) պահանջը (ները) խախտելու պատճառով:

«Ազգային մարմին» հիմնադրամի տնօրեն՝ _____ _____«-» «------» 202 թ.

Ստորագրություն ԿՏ ԱԱՀ

_____

«*» Հայտատուն համարվում է ծանուցված՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ձև N 5

«Համատեղ արտադրության կարգավիճակ տրամադրելու
և դրա գործողությունը դադարեցնելու կարգը հաստատելու մասին»
ՀՀ կառավարության «-» «---» 2023 թ. N -- որոշման

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Համատեղ արտադրության կարգավիճակը դադարեցնելու վերաբերյալ

ՀԱՅՏԱՏՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄ՝

_____

ՀԱՅՏԱՏՈՒԻ ՀԱՍՑԵ՝

_____

Հիմք ընդունելով «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի _____ կետը (երը).

Ազգային մարմինը որոշում է դադարեցնել՝ «_____» ֆիլմին «-» «------» 202 թ. տրված համատեղ արտադրության կարգավիճակի տրամադրման գործընթացը:

Սույն ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում «*» «_____» ֆիլմին «-» «------» 202 թ. տրված համատեղ արտադրության կարգավիճակի հավաստագրի բնօրինակը պետք է վերադարձվի ազգային մարմին՝ պատվիրված նամակով կամ ազգային մարմին անձամբ ներկայանալու միջոցով:

«Ազգային մարմին» հիմնադրամի տնօրեն՝ _____ _____«-» «------» 202 թ.

Ստորագրություն ԿՏ ԱԱՀ

_____

«*» Հայտատուն համարվում է ծանուցված՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար **Ա. Հարությունյան**

28.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 28 դեկտեմբերի 2023 թվական: